

---

**1877-78 թթ. ՌՈՒ-ԹՈՒՐՅԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՕՐԵՐԻ ԵՂԵՐԱԿԱՆ  
ՊԱՏԿԵՐՆԵՐԸ ԱՎ. ԱՐԱՐՈՒՅՆԱՅԻ «ԻՄ ԳԻՐՔԸ» ԵՐԿՈՒՄ**

**ՍԵՐԺ ՍՐԱՊԻՈՆՅԱՆ**

Հայոց մեծ եղեռնը իր սոսկավիթխար ծավալներով և իրագործնան անմարդկային դրսևորումներով ոչ միայն հանգեցրեց սոցիալ-քաղաքական կեցության ու բարոյական նկարագրի, այլև մի ամբողջ ազգի հոգեկերտվածքի խաթարման՝ պարտադրելով նրան համազգային Ես-ի թերարժեքության և զոհի բարդույթը, որն սպառնում է վերածվել գենետիկ ախտահարման՝ դահձի անմեղսագիտակցության պատճառով։ Եվ ոչ միայն։ Այն իր կնիքն է դրել նաև հայ մշակույթի, մասնավորապես գրականության վրա։ Ընդունենք, թե՝ ոչ, հայ գրականության շրջանաբաժաննան մեջ պարտավոր ենք նկատի ունենալ Եղեռնի դաժան իրողությունը, քանի որ այն էապես փոխեց մեր գրականության թե՝ արտահայտչածներն ու եղանակները, թե՝ բովանդակությունը և թե՝ մանավանդ կենսական շեշտադրումները։

Գրականության մեջ, անկախ գրողի խառնվածքից, նախասիրություններից ու հակումներից, իր ուրույն տեղն ու նշանակությունը ձեռք բերեց քաղաքական, նրանում՝ առավելապես Եղեռնի թեման։ Խոյմիսկ մաքուր քնարական խառնվածք ունեցող այնպիսի գրողներ, ինչպիսիք են Ռ. Սևակը, Սիամանթոն, Վ. Տերյանը, Ավ. Խասհակյանը, որ կոչված էին երգելու համարդկային թեմաներով՝ սիրո, բնության, նվիրումի, բարոյականության և այլն, ստիպված էին իրենց քնարի լարերը հնչեցնել նաև արյան ու կոտորածի, մահվան ու մղձավանջի թեմաներով։ Այդ պարտադրանքը, կարելի է այսօր անվարան պնդել, բնորոշ դարձավ գրեթե բոլոր հայ գրողների համար, այլ կերպ՝ համագրական երևույթ։ Մեր գրականության մեջ առաջացել է մի գրական թեմա<sup>9</sup>, թե՝ հոգեմտածողություն, որ այսօր պայմանականորեն կարելի է Եղեռնապատումի գրականություն համարել։ Գրական այդ «տեսակը» իր ներսում նույնպես միատարր չէ։ Տաղանդավոր գրողների մի մեծ խունք նախընտրելի է համարել արյունածարավ դահձի ու նրա անլուր վայրագությունների, դրանով պայմանավորված՝ նաև զոհի տառապանքի ու պայքարող ոգու բացահայտման խնդիրը (Սիամանթոն, Դ. Վարուժան, Ռ. Սեվակ, Ավ. Խասհակյան), մի այլ խունք գրողների համար է կարևորվել է գոյատևման, մղձավանջ թորակելու և կատարելացման ուղիները չկորցնելու հարցը (Հովհ. Թունանյան, Վ. Տերյան, Եղ. Չարենց, Շ. Շահնուր, Կ. Չարյան, Հովհ. Շիրազ, Պ. Սևակ), շատերն էլ կարևորել են դրախտավայր երկրի արտասովոր հնայքի ու դրա խաթարման, ավերակման դրամայի մեկնությունը (Համաստեղ, Մնձուրի, Ավ. Ահարոնյան, Յ. Օշական և այլք), վերջապես, մեկ ուրիշ խմբի համար կենսական է դարձել Երկիր կորուսյալի կարուտի, դարձի ճամփաների մորմոքուն որոնումների թեման (Ակ. Բակունց, Հր. Քոչար, Խ. Դաշտենց, Մ. Գալշոյան և այլք)։

Ահա այս՝ արտաքուստ նույնատարը, իսկ ներքուստ բազմաբովանդակ գրականության բացահայտման խնդիրը մարդկության իմքնաճանաչման ու ինքնաճանաչման իմաստով մի կողմից, մյուս կողմից՝ արհավիրքի բացաս-

ման կարևորման դիտանկյունից մեծ խորհուրդ ունի: Խնդիրն այսօր չափազանց արդիական է նաև այն պատճառով, որ առավել քան պարզագույն ճշմարտությունները կասկածի տակ են առնվում ոչ միայն դահճի՝ ոճրագործությանը պատասխան տալու անխուսափելիության գիտակցումից և այդ օրը հնարավորինս հետաձգելու ձգումներով, այլև այն, որ նարդասիրական քողի տակ թաքնված միջազգային բազմաթիվ կառույցներ և գործիչներ, ելնելով սեփական շահերից, շարունակում են կույր ու խուլ ձևանալ, որով և հնարավոր են դարձնում երևույթի կրկնությունը, դառնում են եղեռնագարկ նոր ժողովուրդների յուրօրինակ դահճակից: Յենց այս հրամայականով էլ ինաստավորվում է Յայոց մեծ եղեռնին, նրան նախորդած և հաջորդած իրողություններին նվիրված ամեն մի հուշի, գեղարվեստական պատումի գրականագիտական, քաղաքագիտական և պատմագիտական քննության ու մեկնության անհրաժեշտությունը:

Յայոց եղեռնապատումի գրականության մեջ իր ուրույն տեղն ու դերն ունի Ավ. Ահարոնյանը՝ քիչ ուսումնասիրված ու հանրությանը պակաս հայտնի մի գորոյ, որ իր յուրօրինակ ձիրքով ու օժտվածությամբ, ճոխ լեզվով ու երևակայությամբ թերևս ծնվել էր գրելու երկրի ու նրա բնության, մարդու և նրա խոր ու անեզզ աշխարհի մասին: Բայց շատերի ննան Ավ. Ահարոնյանը ևս ստիպված եղավ ընդդիմանալ իր բնատուր ձիրքին, խոսել արյան ու մահերի, իր սիրած ժողովորի դանթեական ճանապարհի մասին: Ավելին՝ գրողի իր կոչմանն ընդդեմ՝ նետվեց քաղաքական անհաստատ կյանքի հորձանուտ, ավելի շատ տրվեց հասարակական կյանքին, քան իր սիրած գրականությանը:

Քանի որ նրա ողջ գործունեությունն ընթացավ հայ քաղաքական կյանքի ամենափրորկուն իրադարձությունների կենտրոնում, որի ոչ միայն ականատեսն էր ու ժամանակակիցը, այլև մասնակիցներից մեկը, ուստի նրա գրականությունն էլ վերածվեց այդ կյանքի մի տեսակ գեղարվեստական տարեգրության, որում իրապատումն ու գեղարվեստականը միախառնված են այնպես, որ հաճախ նույնիսկ անտրոհելի են թվում:

Յայ գորգորայի պատմությունը չի սկսվում 1915 հայտնի սև թվականով: Ոչ էլ նույնիսկ 1894-96 թթ. փոքր եղեռնով: Նրա արմատներն ավելի խորն են, տանում են դեպի 1877-78 ռուս-թուրքական պատերազմը ու նրանից էլ անդին՝ 19-րդ դարի առաջին քառորդը: Վերջինիս առաջին վավերագրողը եղավ Խ. Աբրվյանը, իսկ 1877-78 թթ. ոլբերգական դեպերի գեղարվեստական տարեգրորդ դարձավ Ռաֆֆին («Զալալեդիլին», «Խենթը»)՝ Երկուսն էլ՝ Ավ. Ահարոնյանի ուսուցիչներն ու ձևավորողները: Ահարոնյանը դարձավ իր մեծ նախորդների արժանավոր ու շնորհալի սանը՝ մեծ չափով շարունակելով նրանց գործը, նաև անբողջացնելով այն պակասը, որ մնացել էր նախորդներից: Խոսքը, մասնավորապես, վերաբերում է Ռաֆֆուն, որի վերոնշյալ երկերը հիմնականում միտումնավոր (տենդենցիոզ) էին և գերազանցապես մարմնավորում էին հայրենիքի ազատագրության ուղիների փնտրությի և դրանց ուրվագծման՝ հեղինակի սևուուն գաղափարը: Ուզում են ասել, որ բուն զարիկուրանքի, ջարդի ու ոչնչացնան պատկերներն ավելի շատ նիրիած հոգիների արթնացման նպատակն ունեին և կարծես իրենց հիմնական դրսնորման կերպերի ու ազդեցության իմաստով նղվում էին հետնաբեմ:

Ահարոնյանը, շարունակելով Ռաֆֆուն, դառնում է նրա ժառանգորդն ու հետրաֆֆիական ժամանակահատվածի եղերական իրողությունների տա-

րեգիրը: Քանի որ, ինչպես վերը նշվեց, նա ականատեսն ու մասնակիցն է, ավելի ճիշտ՝ կրողը հայոց ամենաեղեռնական ժամանակի ու պատմության, ուստի և վերածվում է նրա տարեգրի: Ահարոնյանի՝ եղեռնապատում գրականությունը պայմանականորեն կարելի է բաժանել երեք փուլի՝ ա) 1877-78 թթ.՝ ուսու-թուրքական պատերազմի եղերական հետևանքների գեղարվեստական հուշագրության, բ) 1894-96 թթ.՝ Փոքր Եղեռնի իրողությունների պատկերման, գ) 1915 և հետագա շրջանի Մեծ Եղեռնի եղերապատումի:

1877-78 թթ. դեպքերը կարևորվում են նրանով, որ դրանք պայմանավորեցին Հայկական հարցի ծագումն իր հայտնի արձարծումներով, իսկ պատերազմի ազդեցության դրսևումների գեղարվեստական ամբողջացմանը միտում է Ավ. Ահարոնյանի ինքնակենսագրական վեպը՝ «Իմ գիրքը», որը նիւթեակ ժամրային տարբեր իրողությունների միաձույլ կառույց է (գեղարվեստական-պատմագրական վեպին բնորոշ երևույթներից զատ նաև ողբերգական և հիշատակարանային-օրագրային տարրերով է հարուստ): Այն գրվել է 1920-ականների վերջերին, և առաջին հատորը՝ «Մանկությունը», լույս է տեսել 1927 թ. Փարիզում: Փաստը կարևորում ենք այնքանով, որքանով որ գրողը ետ էր քաշվել քաղաքական կյանքի բոհուբոհից, հայրենիքից հեռու ի մի էր բերում թե՝ հիշողության ծալքերում և թե փրկված գրառումներում պահպանված փաստերը, կարևոր ու մանրութ թվացող եղելություններն ու իրողությունները՝ դրանք ներկայացնելով յուրահատուկ, իրեն բնորոշ գեղարվեստական գրավիչ ու հյութեղ ոճով:

«Իմ գիրքը» կենսագրական վեպի յուրահատկությունների քննությունը բողոքելով ավելի պատեհ առիթի՝ նշենք միայն, որ, չնայած առաջացած տարիքին, գրողը կարողացել է մի կողմ մենք հասուն ու կենսափորձով հարստացած գրողի իր մտածողությունը և հերոսի մեջ, որ այս դեպքում նույն ինքն է, վերականգնել մանկական պարզ ու իր անզոր դրության մեջ զարմանալի գեղեցիկ մտածողությունը, դատողությունները, ինքնարտահայտնան ձևերը:

Գիրքը բացվում է հայ նահապետական ընտանիքի, նրա անդամների, տան, գյուղի, բնապատերի, աշխատանքի ու կենցաղի պարզ նկարագրություններով, որոնց միջոցով հյուսվում է խաղաղ կյանքի դրախտային անզարդ պատկերը: Ահարոնյանը այսպիսի կառուցվածք է ընտրել ոչ միայն հավատարիմ մնալով կենսապատումի ժամանակագրությանը, այլև, թվում է, նպատակ է ունեցել գեղեցիկի արարման հովվերգական պատկերների ամբողջացմանք առավել ազդեցիկ դարձնել ավերումի, քանի ունեցումի և սպանության դրաման: Երևույթը նկատելի է դաշնում հատկապես մինչպատերազմյան տարիների արտաքուստ խաղաղ թվացող համակեցության պարագաների խախտման պատկերներում, ի մասնավորի՝ «Մեր այգին» պատումում<sup>1</sup>:

Ժամանակի քննադատները շատ հարցերում Ավ. Ահարոնյանի մասին հայտնել են հակասական, հաճախ էլ՝ իրարամերժ կարծիքներ: Սակայն մի հարցում նրանք բոլորը եղել են միակարծիք. Ահարոնյանը նկարագրությունների մեջ վարպետ է: Եվ չին սխալվում: «Մեր այգին» գլխում Ահարոնյանը սեղմ, բայց բանաստեղծական պատկերներով ներկայացնում է հայ մարդու (տվյալ դեպքում՝ հոր՝ դարբին Առաքելի) ձեռքով

<sup>1</sup> Տե՛ս Ավ. Ահարոնյան, Եժ 10 հատորով, հ. 9, Վենետիկ, 1948, էջ 103-109: Այսուհետև սույն հատորից կատարվող մեջքերումների կողքին փակագծերում կնշվի միայն համապատասխան էջը:

ստեղծված դրախտային այգին, որ հենց այդպես էլ՝ իբրև դրախտ, մեխվել-մնացել է մանկան հիշողություններում. «Դրախտ էր մեր այգին: Չորս կողմից շրջափակված բարձր պատերով՝ նաև հեռվից նման էր պարսպապատ բերդի: ... Ու այդ բարձր, անանցանելի պարիսպների ներսը կատարյալ հեքիաթային պարտեզ. արհեստավոր հայրս մի ժամանակ ժրածան հողագործ էր և հմտւտ, ճաշակով ու գեղասեր պարտիզպան:

Գարունը պճնված ու բուրավետ հարսի պես էր իշնուն մեր այգին. դոնից ներս մտնելիս՝ առջևու փռվում էր նաև վարդերի բուրաստանը և շուրջը հոտավետ սուսամբար կրկչան վտակի ափին» (103, այս և հետագա ընդգծումներն իմն են - Ս. Ս.):

Ահա այս դրախտի, որի ստեղծումն ու կայացումը թվում է աստվածային արարչագործություն, ավերումն ու ոչնչացումն էլ ծանր դրամայի ծնունդն է, ողբերգության արմատը: Դա հենց կյանքի սպանությունն է, որ ոչնչով պակաս չէ մեր ըմբռնած եղեռնից: Ու հայ մարդը՝ արարչագործի իր գենը Նոյի ժամանակներից իր հետ բերող մարդու այդ տեսակը, ոչինչ չունի հակադրելու «քանդումի հեշտանքով» գոյատևող մարդու մյուս տեսակին՝ թուրքին, քան իր հուսահատությունը. «Կը քանդեմ, չուզեցի եղ բաղը, կը քանդեմ, գոչում էր հայրս հուսահատ դառնությամբ: Վերան ըլնի էս աշխարհը, գայլ ու գազանի մեջ ենք ապրում. մեր արդար վաստակի տերը չենք» (107):

Այս մտայնությունը ոգու խեղճության արդյունքն է՝ ծևավորված հարյուրամյակների հոլովույթում միշտ իր դրախտ այգին ստեղծած ու վայրենու քմահաճույքի դեմ անզոր մնացած կենսակերպով: Իսկ ավերակված դրախտի պատկերը սոսկ այգու ավերման պատկեր չէ: Այս կյանքի սպանության պատկեր է՝ ազդեցիկ իր սպանիչ մահահոտությամբ. «Աչքերիս առջև բացված տեսարանը արտասվելի էր: Ասես մրրիկ էր անցել մեր այգու վրայով. խաղողի որթերը ճյուղերից թափուր՝ դեա երկինք էին պարզում իրենց փշրված բազուկները, սգավոր կեցվածքով, ածուների մեջ թափթիված էին ողկույզներով բեռնավորված ճյուղերը. ամեն կողմ հողերի մեջ բիրտ ոտքերի ծխլած ողկույզներ» (108):

Սպանված էր ոչ միայն այգին: Սպանվում է մարդու, մանավանդ մանկան պայծառ հոգու մի արևային աշխարհ, մի գեղեցիկ, աստվածային պատկեր եզերվում է մահվան շրջապատկով: Եվ ինչո՞վ այդ սպանությունը նույնը չէ մարդու ֆիզիկական ոչնչացման հետ, երբ մարդ խորթանում է աշխարհին ու արարման մտքին. երբ մարդու հոգին չկա, չկա նաև ֆիզիկապես: Գրողը շատ լավ է գիտակցել այդ և ներկայացրել նույնքան լավ. «Յետ դարձա, անցա մեր ավել դրախտի միջից և սիրուս փոճկաց... Այգին այլաս օտար էր ինձ համար: Զարբեր էին բնակվել այնտեղ» (109):

Մեռնող այգու կամ դրախտի դրաման մանկան եղծվող ու մեռնող հոգեաշխարհի ծանր զգացողությունն է, որ տարիների հոլովույթում իր մեջ կրել է գրողը, տարել հետը իր թափառ կյանքի բոլոր շրջադարձերում: Ու այժմ դարձյալ իր աստանդական կյանքի հասուն ոլորանում, իրեն իրավունք է վերապահում դատել, թվում է, ոչ հումանիստաբար, բայց արդարացիորեն. «Տարիներ հետո շատ եմ խորիել այդ ավերածի մասին, որ հար և նման Յայրենիքին ճակատագիրն էր հիշեցնում: Մի օր, մի նզուված օր ասիական անապատները իրենց ծոցից վայրագ խուժանները փսխեցին. արիական անուշ՝ Պարսկաստանից սկսալ մինչև Պոնտոս, մինչև Փոքր Ասիա և Արևելյան Եվրոպա, խաղաց այդ մարդախոշոց ու

արյունածարավ մրրկի պես և հազար տարի քաղաքակրթության ու բարձր մշակույթի ավերը սփռեց ամենակուլ մորեխի պես:

...Անապատի ոգին հարթ տարածություն է սիրում:

**Ամբողջ հայոց պատմությունը մեր այգու եղերական պատմությունն է.** տարիներով ու դարերով կերտել գեղեցիկն ու բարին ու մի օրում, մի ժամում մոխիրների վրա նստել բարեարոսության երեսից» (109):

Ահարոնյանը մանկական հիշողությունների պարզ ու անզարդ տիրույթում, դրանց դրսնորումներում բացում-բացահայտում է եղեռն-զուլումի բուն էությունը. Եղեռնը սոսկ ջարդը չէ, սպանությունը չէ. այն նախ և առաջ դրախտի սպանությունն է, այգու բնաջնջումը իրական կյանքում ու ... մանկան հոգուն: Ապա՝ գաղթականները: Աշխարհի չար ու բարուն անտեղյակ՝ հայ մանուկն արդեն գիտե գաղթը, գաղթականին՝ Ալաշկերտի Զուշան գյուղից իրենց գյուղում ապաստանած չորս ընտանիքների կյանքից, վերադարձի ճանփին Դավաբրյունի կամ Դիարի գյուղակում բուք ու բորանի, քուրդ ու հարամի բերանն ընկած-զոհված գաղթականների պատմությունից: Եվ դա... առօրյա էր, կյանքի սովորական ընթացք: Իսկ անսովորը երևույթի ահագնացումն էր, նրա անեզր տարածվածությունը 1877-78 թթ. պատերազմի շրջանում: Ահարոնյանի գրիչը բացառիկ թափ է առնում, վերածվում նկարչի վրձնի, որ ամենաանշան, փոքր շարժումով անգամ հյուսում է հայ եղերական կյանքի ողբասքը. «Ու օրերով, շաբաթներով, ամիսներով գալիս էին զուլումից մազապուրծ բեկորները, դողդոջուն մանուկներ, այծյամների պես խրտնած աղջիկներ, երկու տակ ծալված ծերեր ու պառավներ, որ մրմնջում էին այլևս անհմաստ դարձած աղոթքներ, իրենց պատիվը հայրերի նվիրական աճյունի պես գրկած, մատահ հարսներ՝ թանձր քողը երեսներին, խոշտանգված, վիրավոր տղամարդիկ» (172):

Ու մանուկ հոգին մնում է շլմորած, շփոթված, սոսկահար այս տարօրինակ, աներևակայելի կյանքի պատկերներից, դաշնում անկարող իր մանկական մտքի զորությամբ գրելու ամենապարզ հարցի պատասխանն իսկ, թե ինչո՞ւ հայր, եղբայր, որդի ու դուստր, կին ու նայր կորցրած, տառապանքի, սարսուի անհնարին մի «շարանի» վերածված այս մարդկանց ասում էին գաղթական. «Առաջին անգամն էի լսում այս ճակատագրական բառը՝ գաղթական. **Յայոց աշխարհի բախտի նշանակն էր**» (179):

Անըմբռնելի, խեղդող մի խորհրդավորության քող ծածկում է մանկան մտքի քննության ծիրում իրենց ննան խոսող, աղոթող, լաց լինող, հազվադեպ՝ ծիծաղող այդ մարդկանց գերազանցությունը գաղթ ու ավեր, սպանություն ու բռնաբարություն չտեսածներից, բայց հոգու և մտքի մի թաքուն զգայարանով հասկանում է, որ «Տառապանքի մեծությունը նրանց դարձնում էր մեզնից բարձր եակներ, **նրանց լացը ավելի խորունկ էր**, և նվազած, մի կետի սեռոած նրանց հայցքը, դեմքերի դալկությունը, նրանց անճար վշշոցը ինչ որ անդրշիրիմյան բան ուներ՝ սարսուազդեցիկ ու ահավոր» (173):

Ահարոնյանը զարմանալի ձիրք ունի՝ ցավի խորքերը պրպտելու, նրա ենթաշերտերը պեղելու, ամենաանհնարին սահմանները հասնելու համար: Նա ոչ միայն բացում-ներկայացնում է եղեռնազարկ մարդկանց եղեռնակիրների թշվառությունն ու ողբերգությունը, այլև ներկայացնում այն անդարձնանելի ավերածությունները, որ կատարվում են ականատեսների և ժամանակակիցների հոգիներում: Այս դեպքում արդեն արտասովոր դիպուկ ու սեղմ բնութագրերը մեխսվում-մնում են տեքստի տիրույթում՝ իբրև հավերժական

խարամ՝ Եղեռնածին մարդկանց ճակատներին դրոշմված. «Մանուկ հոգիս էր սրբարթում այս զուլումի թևերի շրջումից» (173), «Ութ-ինը տարեկան էի, և հոգիս լացեց բնազդորեն, այնպես, ինչպես լալիս է մանուկը՝ մոր արցունք տեսնելով» (174):

Ահարոնյանը միայն պարզ սրածությունների ու կոտորածների մեջ չէ, որ փնտորում է Եղեռնական իրողություններ: Իբրև մեծ հումանիստ՝ նա շատ հստակ հասկանում է, որ ժողովուրդները ոտնատակ են լինում քաղաքական նենգ խաղերի, մասնավորապես՝ մեծ տերությունների խաղերի արդյունքում: Դա պայմանավորված չէր հասուն գրողի ու մեծ կենսափորձ ունեցող քաղաքական գործչի ընթանումներով: Դա, ըստ Էության, վաղ մանկության օրերից եկող ժողովրդական մտածողության՝ գրողի մեջ միևնույն արյուն դարձած խտացումով էր պայմանավորված: «Ուսւության քաղաքական 1877-78 թթ. պատերազմն էր օդի մեջ:

Ժողովուրդն ասում էր, թե «փախս կա առաջներս»...

Պատերազմ ու փախս դարձել էին հոմանիշ սահմանամերձ ժողովրդի համար», - գումար է Ավ. Ահարոնյանը՝ բացելով ոչ միայն մանկան հիշողությունների, այլև ժողովրդական մտածողության տիրույթը (տե՛ս 175): Գրողը պատերազմի բոթը համեմատում է պարզ երկնքում հանկարծակի պայթած փոթորկի հետ, որ զգում է ժողովուրդը տակավին կայացման ընթացքի մեջ, դեռ նպատակադրման ընթացքի մեջ. «Ժողովուրդներն զգում են պատերազմը, ինչպես ուղղութեան անապատի նրիկը» (177): Ու ներքին մի տագնապով ողբերգազավեշտախառն կենսակերպով ու զրուցներով ժողովուրդն սպասում է մեծ փոթությանը, հերթական տառապագին օրերին, որովհետև իր կամքով չէ ու իրենից դուռս է պատերազմի հայտնությունը. «... Երբ քագավորն է ղոշուն քաշողը, ի՞նչ հարցնես. քագավորի կամքն է» (178): Ու նաև զարմանալի սառն ու հաշտ, իր դաժանությամբ արտասովոր դատողությունը. «Պատերազմ է, հալքաթ ռայաթը ոտքի տակ կ'երթա, փախիր, որ պրօնես» (185): Ի պատիվ Ահարոնյան՝ պիտի ասել, որ չնայած ազգային ողբերգության ընդգրկումների ու խորքի հստակ պատկերացումներին, նրա մեջ չի կուտակվում մաղձ ու ատելություն օտարների, անգամ՝ թշնամու հանդեպ: Նրա համար՝ իբրև մեծ գրողի, մեծագույն ողբերգությունը կյանքի սպանությունն է, նրա բարձումը, և սա ծշմարիտ, իսկական գրողի հիմնական այցեքարտն է: Այս որակը՝ գրողի՝ նրա կոչման որոշիչ դրսնորումը, նկատվել է տակավին անցյալ դարասկզբին անգամ այն քննադատների կողմից, ովքեր առանձնապես ոչ միայն հիացած չէին Ավ. Ահարոնյանի գրականությամբ, այլև նրա հանդեպ ունեին անթաքույց մերժողական վերաբերմունք: Այսպես, 20-րդ դարասկզբի մարդուսիստ գրաքննադատ, ոչ անհայտ Ցոլակ Խանզադյանը գրում է. «... Ա. Ահարոնյանի գրվածքները միշտ ներշնչված են ամենալայն մարդասիրական զգացմունքներով. օտարասեցությունը խորթ է նրան: Նրա զգայուն սիրութ չի տանում չարն ու բնությունը, նա տաճզվում է, լալիս է մարդկային ցավի համար, բողոքում մարդկային բարբարոսության դեմ: Խոր հարգանքի զգացմունք պետք է տածել դեպի գրողը, որ կարողացել է մեր կյանքի սուկալի պայմաններում էլ բարձր պահել մարդասիրության անքից դրոշակը»<sup>2</sup>: Իսկ այս գիծը Ահարոնյանի մեջ ձևավորվել է ոչ իբրև գրողական պարտքի գիտակում և զգացողություն: Դա նրա մեջ ձևավորվել է վաղ մանկության տարի-

<sup>2</sup> «Գարուն», գրական-քննադատական ալմանախ, գիրք 4, Մ., 1912, էջ 146:

ներին, իր ժողովրդի, մոր, հոր, հողի ու ազգային գենետիկ զգացողությունների ու ըմբռնումների տիրույթում, երբ մանուկ հոգին փոթորկվում ու սարսում էր մահացու վիրավորված թուրք ասկյարի՝ նորն ուղղված «սրտաճմլիկ կտակ» ողբից (տե՛ս 189): Ու մանկան ավերակվող սրտի ու հիշողության մեջ դաշվում-մնում են կորստի տառապագին ողբի անհուսության տողերը՝

«Վերան ըլճես, Ալաջադա՛ղ,  
Զիվան չը մնաց»:

Նաև գրողի զարմացական, զայրութախառն տարակուսանքը. «Թշվառ ու դաժան թուրք ժողովրդի պատմությունն էր այս: Նա էլ իր ջահիլ ջիվաններն է լալիս, որ խելահեղորեն շարտում է արյունի դաշտը. Ի՞նչ վաստակելու համար, ինքն էլ չգիտեր» (193):

Բայց ինչքան էլ մարդասեր ու ծշմարիտ գեղագես՝ Ահարոնյանը ամենից ավելի ու ավելի խորունկ, բնականաբար, ապրում էր իր ժողովրդի զարհուրանքը, նրա կյանքի եղջումն էր դառնում Ահարոնյանի ցավերի ցավը: Այնքան խորն է ու անհատակ այդ ցավը՝ մանուկ տարիներից անթեղված, որ տասնամյակների հեռվից շարունակում է մորմոքել ու խանձել գրողի հոգին, և պատկերագրումների ընթացքը մղում է բանաստեղծական շիկացնան. «Դնձած ցորենը փոշած մնաց արտում: Գութանն ակոսում, նախիրը անտեր նորեն ցրվեց դաշտերում բառաչելով, լծված անասունները կալերում փնչացնելով մնացին խայանի վրա. թոնիրը վառ մնաց, խլթխլթան կերակուրը վրան. հունցած խնորդ տաշտի մեջ ու մերը մանուկը ուրացավ:

Փա՛խ էր...» (192):

Ծանոթ պատկեր: Թվում է՝ մի հատված է Պ. Սևակի «Անլռելի զանգակատուն» պոեմի «Ղողանց եղեռնականից», այնքան սեղմ, դիպուկ ու մանավանդ՝ ազդեցիկ են ձևակերպումները: Չնայած Ավ. Ահարոնյանի գեղարվեստական հուշագրության մեջ 1877-78 թթ. ռուս-թուրքական պատերազմի ու նրա սոսկանքի մասին պատկերները մեծ տեղ չեն գրավում (ընդամենը 40-45 էջ), սակայն տաղանդավոր գրողի հմուտ նկարագրություններում դրանք ստանում են գրեթե սպառիչ բնութագիր: Եղեռնը, ինչպես վերը նշվեց, սոսկ մարմնավոր, ֆիզիկական սպանությունը, նախճիրն ու ոչնչացումը չեն:

Պատերազմի արհավիրքը հաճախ ոչնչացնում է նաև հույսը, հավատը, բերում սպասումների փլուզում: Յայ ժողովուրդը գալիքի իր սպասումներում անհուսության դժնդակ օրերին հաճախ է հայացքը հառել օտարներին, բանաստեղծի դիպուկ բնորոշմամբ՝ «օտար եզերներից հայցել ոգու կրակ»: Վերջին հարյուրամյակներին՝ առավելապես դեպի Ռուսաստանը: Չժխտելով հանդերձ Ռուսական պետության, մասնավորապես ռուս ժողովորի պատմական վճռորոշ դերը հայ ժողովորին ֆիզիկական բնաջնջումից փրկելու գործում՝ նշենք նաև, որ առանձին դեպերում պակաս չեն եղել և այն կորուստներն ու հիասթափությունները, որ ապրել է ժողովուրդը քաղաքական կեղտու խաղերի հետևանքով: Յենց նույն՝ 1877-78 թթ. ռուս-թուրքական պատերազմի օրերին ռուսական բանակի առաջխաղացումների ու անհասկանալի նահանջների արդյունքում դարձյալ կորցնում էր հայ ժողովուրդը: Կորցնում էր և կյանք, և տարածքներ, և հավատ ու հույս: Ծանր էր հատկապես հույսի փլուզման տառապանքը, մանավանդ որ ռուսական զորքի հրամկագմում էին երևե-

լի հայ զորավարներ Լոռիս-Մելիքովը, Լազարկը, Շելկովնիկովը: Իսկ արդյունքում՝ «Զարդուփշուր եղած փախստական հայություն: Երկու բանակների տակ տրորվող հայ ժողովուրդ. սահմանից անդին՝ ավեր ու արյուն, սահմանից ասդին՝ փախ ու վախ...» (190-191):

Մանուկ Ահարոնյանի հոգում առհավետ դրոշմված այս պատկերները ոչ միայն պիտի մղեին նրան դեպի քաղաքական կյանք ու կանխորոշեին նրա հետագա ողջ գործունեությունը, այլև բերեին ըստ ամենայնի անառարկելի մի եզրահանգման. «Կյանքը դարձել էր կատաղիների հիմարանց, ու հայագի զորավարները՝ թշվառ ու անհայրենիք՝ ուսւ բանակը վարում էին Յայ աշխարհի ավերակների վրայով՝ ի հաճույս ուսւ դիվանագետների ու ցարի» (190):

Իսկ ուսւները ավելի լավ չեին վերաբերվում հոյսով, հավատով, անգամ ջերմությամբ ու սիրով իրենց ընդունող հայ մարոկանց՝ «Տե՛՛ր, ուսւ ուսւ սի թուրը կտրուկ անես», - հիշում է Ահարոնյանը հոր աղոթքի խոսքերը: Եվ սակայն նրա հոգում առհավետ դրոշմվել են նաև հոգին ու ինքնասիրությունը տրորած-ոչնչացրած դեպքերն ու իրողությունները, երբ անկեղծ ու առատ հյուրասիրությունների պատասխանները եղել են ուսւ կուլակների մտրակների հարվածները (տես 197, 203), երբ մանկան հոգում սպանվում է հոր ամենակարողության մասին առասպելը՝ «հայրս ամոթից ու սրտի դառնությունից քարացավ իր տեղում՝ երեսը ձեռքերով ծածկած» (198), ու դառնանում է հոգին, դատարկվում՝ աշխարհը: Մինչև կյանքի մայրամուտը գրողի հոգում պիտի մնար անցած օրերի մորմոքը՝ ծնված մարդու մեջ մարդուն ոչնչացնող պատկերներից. «կողակներից մեկի մտրակը բարձրացավ ու շառաչյունով իջավ հորս թիկունքին մեկ, երկու, երեք...

Յայրս հետ-հետ քաշվեց, օրորվեց, ձեռնափայտին հենվեց ու գլուխը քաշ՝ մնաց խորտակված:

Ես հեծկլտալով վազեցի, փարեցի իր փեշերին:

Չիերը մեր առվույտն էին ուտում, տերերը՝ հացը...» (203):

Եվ ո՞ր հոգեբանը կարող է ասել՝ ավելի խոր ու տևական են դրոշմվում մանուկների հոգում ջարդի, բռնագաղքի պատկերնե՞րը, թե՝ իրենց հայրերի՝ իբրև պաշտպանի ու հույսի՝ իրենց մեջ հյուսված առասպելի փլուզումը: Մանավանդ նրանց կողմից, ումից սպասվում էր հույս ու ապահովություն: Ծանր է հատկապես վշտի եռթյան ըմբռնումը՝ «Յորս վիշտը քաղաքական էր» (216):

Ահարոնյանի կենսապատում վեալը արժեքավոր է ոչ միայն իրապաշտական պատկերների ազդեցիկ որակներով ու գեղարվեստականությամբ: Այն նաև կարևոր շոկումների և նորում Յայոց եղենին սկզբնավորման և ընթացքի մասին մեր ունեցած պատկերացումները: Ավանդաբար առաջ քաշվող այն տեսակետը, թե Յայոց եղենը սկսվել է 1894-96 թթ. հայտնի ջարդերով և ավարտվել 1915 թ. Սեծ եղենին դեպքերով, այնքան էլ ծշմարտացի չէ: Ցեղասպանությունը՝ իբրև մարդկային հասարակական-քաղաքական կյանքի ամենաաքստմելի ոճիր, չափում է զոհերի թվո՞վ, թե՝ սպանությունների, ոչնչացման դրսնորման անմարդկային բնույթով: 1948 թ. ժնկան հայտնի կոնվենցիան սահմանում է ազգային պատկանելության հողի վրա տեղահանությունների, հալածանքների և ոչնչացման դրույթը: Այս ամենն առկա են 1877-78 թթ. ռուս-թուրքական պատերազմի հետևանքներում: Նույն կոնվենցիայում չի կոնկրետացվում՝ երեսուն հազար մարդկանց սպանությունը, տեղահանությունը, բռնագաղքը ցեղասպանությո՞ւն է, թե՝ ոչ: Այդ պատերազմում քրդերը,

չեթեները, չերքեզները, մուսուլմանական այլ ցեղեր չհալածվեցին, չոչնչացվեցին: Բայազետում և Ալաշկերտում, այսինքն՝ իրենց բուն հայրենիքում հազարամյակներ շարունակ ապրող ու ստեղծագործող հայ մարդիկ տեղահան արվեցին ու ոչնչացվեցին նախ և առաջ այն բանի համար, որ հայ էին: Եվ մուսուլման չէին: Ազգային և կրոնական պատկանելության պատճառով:

Այսինքն՝ սա մարդկության պատմության մեջ ցեղասպանության առաջին դրվագն էր, գուցե ամերիկյան հնդիկների ոչնչացումից հետո: Դենց ննան դեպքերի պարբերականությունն էլ բացեց մարդկության աչքերը, հնարավորություն տվեց, նպաստեց 1948 թ. կոնվենցիայի կայանալուն: Եվ այս՝ եղեռնը ճանաչել տալու առումով, անուրանալի է ԱՎ. Ահարոնյանի գրականության դերը, քանի որ, ինչպես նշեցինք, Ռաֆֆին իր վեպերով հետապնդում էր բոլորովին այլ նպատակ, նաև՝ Վալենտին Պիկուլը իր «Բայազեր» վեպով: Ահարոնյանի «Իմ գիրքը» այս առումով ձեռք է բերում ոչ միայն գեղարվեստական գրականության, այլև պատմագրական-սկզբնադրյուրային նշանակություն: Նրանով Հայոց եղեռնի 1915 սկ թվականը դադարում է կոնկրետ տարեթիվ մնալ, և շրջանակը սկսվում է 1877-78 թթ. և ձգվում մինչև 1922 թ.՝ շուրջ կես դար:

**СЕРЖ СРАПИОНЯН – Картины резни, имевшей место в дни Русско-турецкой войны 1877–78 гг., в "Моей книге" А. Агароняна.** – Анализируя биографический роман "Моя книга" Аветиса Агароняна – известного писателя, политического деятеля и публициста начала XX столетия, – автор показывает, как отражены здесь первые шаги Геноцида армян. Считая этот автобиографический роман произведением исторически достоверным, автор ссылается на факты, художественно запечатлённые А. Агороняном. В статье утверждается, что начало массовым депортациям и истреблению армянского населения было положено во время Русско-турецкой войны 1877–1878 гг.; своего апогея политика геноцида достигла в 1915–1922 гг.

События 1877–1878 гг., полагает автор, соответствуют по своей природе основным положениям Женевской конвенции 1948 года, и их следует классифицировать как геноцид.

**SERGE SRAPIONYAN – The depiction of the Genocide on the days of Russian-Turkish War (1877-78) in "My Book" by Av. Aharonyan.** – On the basis of a biographical novel "My Book" by the 20th-century famous writer, political leader and publicist Avetis Aharonyan, an attempt has been made to show how the Armenian Genocide was started.

Regarding the autobiographical novel as an expression of realistic literature, the author, on the basis of the facts stated by Av. Aharonyan, and their artistic manifestation, develops the idea that the great deportations and extermination of the Armenian people that began during the Russian-Turkish War of 1877-78 led to the Great Genocide of 1915. It is proved that the events of 1877-78 correspond to the fundamentals of Geneva Convention of 1948 and should be considered as the beginning of the Great Genocide.